ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրական ցուցակները գրանցելուց հետո ընտրական հանձնաժողովներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք:

Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ***ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար*** թվով վստահված անձանց վկայականներ:

Վստահված անձ չեն կարող լինել՝

- դատավորները,
- դատախազները,
- քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք,
- ոստիկանությունում ծառայողները,
- ազգային անվտանգության ծառայությունում ծառայողները,
- դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում ծառայողները,
- քրեակատարողական ծառայությունում ծառայողները,
- պրոբացիայի ծառայությունում ծառայողները,
- փրկարար ծառայությունում ծառայողները,
- զինծառայողները,
- դիտորդները,
- թեկնածուները,
- ընտրական հանձնաժողովների անդամները:

Վստահված անձն ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա գտնվել, եթե ունի սահմանված նմուշի վկայական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԹԻՎ ____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023Թ.

ԿՈՌՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ(ԿՈՌՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ)

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁ

ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Կ.Տ.

ՏՐՎԱԾ է «____» _____ 2023Թ.

ՈՒԺԻ ՄԵՋ է ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) վստահված անձի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, վստահված անձի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Հանձնաժողովի նախագահին **ԱՐԳԵԼՈՒՄ Է** ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունը:

! Վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

Վստահված անձը պարտավոր է իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա գտնվել՝ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի **1 ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁ**:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները ***չեն կարող ունենալ վստահված անձ:***

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վստահված անձն իրավունք ունի՝

- **խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու ընտրական հանձնաժողովի նիստերին:** *Վստահված անձը խորհրդակցական ձայնի իր իրավունքն իրացնում է նիստը վարողի կողմից ձայն ստանալուց հետո,*
- **ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:**
- **հետևելու քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:**

Վստահված անձինք իրավունք ունեն տպագրության ողջ ընթացքում տպարանում հետևելու քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրմանը, ինչպես նաև իրենց միջոցներով ուղեկցել դրանք տեղափոխող մեքենան:

Վստահված անձինք կարող են քվեարկության նախորդ օրը հետևել ընտրական փաստաթղթերը և տեխնիկական սարքավորումները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին: Քվեարկությանը նախորդող և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում դիտորդները, չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, կարող են հետևել քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշերի հաշվարկման և պահպանման գործընթացներին:

- **քվեարկության ընթացքում ներկա գտնվելու քվեարկության սենյակում,**
- **լուսանկարել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, քվեարկության ընթացքը՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները,**
- **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին,**
- **չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից,**

Քվեարկության ընթացքում ԱՐԳԵԼՎՈՒՄ Է.

- ✓ ծանոթանալ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներին,
- ✓ կատարել քաղվածքներ և նշումներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից:

- **չմիջամտելով հանձնաժողովի անդամի և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի աշխատանք-ներին՝ ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների նույնականացումն իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող անդամների և մասնագետի, քվեատուփը հսկող անդամի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին,**
- **պահանջելու, որ հանձնաժողովի անդամն ստուգի ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը,**
- **քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին,**
- **պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցա-մատյանում, եթե համարում է, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում,**
- **ստորագրելու հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկների վրա,**
- **ստորագրելու փակված ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկի վրա:**

Գրանցամատյանում գրառվում են ստորագրողի անունը, ազգանունը, դրվում է ստորագրության նմուշը:

- ստանալու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով,
- ստանալու տեխնիկական սարքավորման միջոցով տպված ավարտական տեղեկանքի մեկ օրինակ,
- վերահաշվարկի ժամանակ ծանոթանալու ընտրական փաստաթղթերի պարկում գտնվող փաստաթղթերին, քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներին, ինքնուրույն կատարելու քաղվածքներ,
- ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ,
- Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Դիմումը հասցեագրվում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը:

Եթե դիմում տալու համար Ընտրական օրենսգրքով սահմանված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Դիմումը պետք է՝

1. ստորագրված լինի դիմողի կողմից,
2. ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն, տրման ամսաթիվը,
3. դիմումում սահմանված լինի դիմումատուի պահանջը,
4. բերված լինեն հիմնավորումները, հնարավոր ապացույցները՝ առկայության դեպքում, կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված ***լիազորագիր***: Վստահված անձի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող՝ ***սահմանված նմուշի վկայականի պատճենը***:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Դիմում ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել՝

- **աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն,**
- **քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 19:00-ն:**
- **քվեարկության օրը՝ ժամը 8:00-ից մինչև 22:00-ն,**
- **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև 18:00-ը:**

Վստահված անձն իրավունք ունի ներկայացնելու.

- **վերահաշվարկի դիմում**, եթե նա ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,
- **ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում**, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին,
- **այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում:**

Վերահաշվարկի, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումները ներկայացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝** ***ժամը 12:00-ից մինչև 18:00-ն,***
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ***ժամը 9:00-ից մինչև 11:00-ն:***

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝** ***ժամը 12:.00-ից մինչև 18:00-ն***
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ***ժամը 9:00-ից մինչև 18:00-ն***
- **քվեարկությունից հետո երրորդ օրը՝** ***ժամը 9:00-ից մինչև 11:00-ն:***

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները, ներկայացվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ **2 օրվա ընթացքում այն օրվանից**, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Նշված բողոքները կարող են ներկայացվել՝

- **աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն,**
- **քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 19:00-ն:**

Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության օրը ժամը 8:00-ից մինչև 22:00-ն,**
- **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12:00-ից մինչև 18:00-ն,**
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 11:00-ն:**

Վստահված անձը պարտավոր է՝

- ☑ պահպանել Ընտրական օրենսգրքի պահանջները.
- ☑ իր լիազորություններն իրականացնել Ընտրական օրենսգրքի շրջանակներում և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով.
- ☑ գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար,
- ☑ ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և սահմանված նմուշի վկայական՝ այն տեսանելի ձևով կրելով վերնազգեստի վրա:

Վստահված անձն իրավունք չունի՝

- ☑ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանք-ներին.
- ☑ ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ.
- ☑ միջամտելու քվեարկության ընթացքին.
- ☑ օգնելու ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Վստահված անձի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի վստահված անձին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանք-ներին ներկա գտնվելուց, ***բացառությամբ վստահված անձի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքերի, որոնք էապես խաթարում են ընտրա-կան հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեար-կության բնականոն ընթացքը***:

Ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու, ընտրական հանձնա-ժողովի կանոնակարգը խախտելու, ինչպես նաև հանձնաժողովի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում՝ վստահված անձի նկատմամբ կիրառվում է նախազգուշացնում:

Նախազգուշացումից հետո՝ վստահված անձի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, վստահված անձը հեռացվում է ընտրական հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից և տեղամասային կենտրոնից:

Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ***ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:***

Վստահված անձին տեղամասային կենտրոնից կամ հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը.

☑ վիճակահանությամբ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները.

☑ հարյուրական փաթեթներով առանձնացնում է քվեաթերթիկները և քվեարկության ծրարները.

☑ կահավորում է քվեարկության սենյակը: Կահավորումը պետք է ավարտի մինչև ժամը 24.00-ն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը ժամը 7:00-8:00 տեղամասային ընտրական հանձնաժողովում իրականացվում են հետևյալ գործողությունները.

- իրականացվում է վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար,
- ստուգվում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը: Մասնագետը մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք, որը սոսնձվում է գրանցամատյանում,
- հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնվում է նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը,

- գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարվում է հանձնաժողովի կնիքի համարը,
- քվեաթերթիկները և քվեարկության ծրարները հանձնվում են քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամին (անդամներին),
- ընտրողների ցուցակները հանձնվում են ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին),
- հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ հատկացվում է ինքնա-սոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

Ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:

1. Ընտրողների ինքնության ստուգում և նույնականացում տեխնիկական սարքավորման միջոցով

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի:

Ընտրողը մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

- ☑ *նույնականացման քարտը,*
- ☑ *կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *ոչ կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,*

օտարերկրյա քաղաքացիների համար՝

- ☑ *Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող ժամանակավոր կացության քարտը,*
- ☑ *մշտական կացության քարտը,*
- ☑ *Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը,*
- ☑ ***Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների համար նաև*** *ՌԴ քաղաքացիությունը հավաստող անձնագիրը՝ Երևան համայնքի պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ նշումով,*

քաղաքացիություն չունեցող անձանց համար՝

- ☑ *Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը,*
- ☑ *ժամանակավոր կացության քարտը,*
- ☑ *մշտական կացության քարտը,*
- ☑ *Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը,*

փախստական ճանաչված անձանց համար՝

- ☑ *կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը:*

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԸՆՏՐՈՂԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ԱՌԿԱ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Եթե ընտրողը ներկայացրել է ***ԱՅԼ ԱՆՁԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ***, ապա մասնագետն այդ մասին տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ Է ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ



ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԷԿՐԱՆԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ Է ԿԱՆԱՉ ՆՇԱՆ

I. ընտրողը ներմուծում է իր մատնահետքը: Մատնահետքը ներ-մուծելու անհնարինության դեպքում մատնահետքի ներմուծման քայլը բաց է թողնվում:

II. Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև ընտրողի լուսանկարը պարունակող քվեարկության կտրոն:

III. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին:



Եթե ընտրողը գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է **դեղին նշան**, իսկ եթե տեխնիկական սարքավորման մեջ առկա է տեղեկատվություն, ապա նաև այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված այդ ընտրողը: Նշված դեպքում ընտրողը դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից:



Եթե ընտրողն ունի մեկ այլ վավերական փաստաթուղթ, ապա էկրանին հայտնվում է **դեղին նշան** հետևյալ ծանուցմամբ՝ «Ընտրողը չի կարող գրանցվել այս փաստաթղթով, քանի որ դրա վավերականության ժամկետը լրացել է, և նա ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ»:



Եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է **կարմիր նշան**, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին, և հանձնաժողովի նախագահը քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

2. Ընտրողների գրանցումն ընտրողների ցուցակում

Ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, և հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:

3. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը

Քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկները ստանալուց:

4. Քվեարկություն

Ստանալով քվեաթերթիկները և քվեարկության ծրարը, ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

Ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության, կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով:

Քվեաթերթիկն առանց ծալելու դնում է քվեարկության ծրարի մեջ:

Չօգտագործված քվեաթերթիկները գցվում են քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ:

Ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ***ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու:***

Անձն իրավունք ունի օգնելու ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող միայն 1 ընտրողի:

Ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Քվեարկելուց անմիջապես հետո **ԸՆՏՐՈՂԸ՝**

- մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին,
- նրան է հանձնում քվեարկության կտրոնը:

5. Քվեատուփի մոտ

Ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի ***ԱՆԴԱՄԸ՝***

- ստուգում է կտրոնը (կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը),
- առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը,
- բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

Եթե ընտրողը չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:

Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ

Ժամը 20:00 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ☑ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ,
- ☑ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս,
- ☑ փակում է քվեատուփի ճեղքը,
- ☑ փակում է տեղամասային կենտրոնը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Մինչև քվեատուփը բացելը տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

- **փաթեթավորում է** հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքվում և տեղադրվում է պարկում,
- **հաշվում է** ընտրողների ցուցակում ընտրողների ստորագրությունների հիման վրա քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը,
  - ☑ առկայության դեպքում **առանձին հաշվում է նաև** քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում առկա ստորագրությունների թիվը:

Ընտրողների ցուցակները տեղադրվում են առանձին պարկում:

- Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում,
- տեղեկանքի մեկական օրինակ՝ ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և ընտրություններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի,
- **հաշվում է** ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում:
- **հաշվում է** ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում,
- **հաշվում է** չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում,
- **հաշվում է** չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում,
- **առանց հաշվելու փաթեթավորում է** չօգտագործված քվեաթերթիկները և սահմանված կարգով ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Հանձնաժողովի նախագահը

- բացում է քվեատուփը,
- քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար,
- քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը,
- **հայտարարում է** քվեաթերթիկի՝
  - ✓ սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
  - ✓ վավեր կամ անվավեր լինելու մասին:

Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվանումը, որի օգտին է քվեաթերթիկը:

Բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների քվեաթերթիկները տեսակավորելուց հետո յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի կողմ քվեարկած քվեաթերթիկները փաթեթավորվում են առանձին փաթեթներում:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն:

Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից **12 ԺԱՄ** հետո:

Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.

- ☑ **1 օրինակը** փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- ☑ **1 օրինակը** տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում,
- ☑ **2 օրինակը** ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Արձանագրությունը ***ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ*** *հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները,* ***ԿՆՔՈՒՄ Է*** *հանձնաժողովի նախագահը:*

Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրական փաստաթղթերը և պարագաները:

Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխվում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ: Դիտորդները կարող են իրենց միջոցներով ուղեկցել ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելու վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

Ելակետային փվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված փվյալները:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան **3 ԺԱՄԸ** մեկ, տպում է քվեարկության արդյունքների աղյուսակավորումը:

Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան **20 ԺԱՄՎԱ** ընթացքում:

Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման մեկ օրինակ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից **24 ԺԱՄ** հետո ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ԺԱՄ ՀԵՏՈ**, ամփոփում է Երևանի ավագանու ընտրության քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկութ-յան արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

* * *

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում **www.elections.am**: